



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

29 մայիսի, 2016 թ.

ք. Երևան

«Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» աշխատաժողովի

2016 թվականի մայիսի 28-29-ին Աղվերանում Իրավաբանների հայկական ասոցիացիան ՀՀ արդարադատության նախարարության, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց հակակոռուպցիոն աշխատաժողով «Բիզնես ոլորտի կոռուպցիոն ռիսկերը Հայաստանում. արձանագրված ոլորտային խնդիրները և հետագա անելիքները» խորագրով: Աշխատաժողովը կազմակերպվել էր ԵՄ ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում: Սույն աշխատաժողովը, մասնավորապես տեղի ունեցավ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ֆինանսավորման և «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցային համալիրի համաֆինանսավորման շրջանակներում:

«Մեկ տարի առաջ բիզնեսը որևէ նշանակալի մասնակցություն չուներ կոռուպցիայի դեմ պայքարում: Մենք հռչակեցինք, որ շատ կարևոր է՝ բիզնեսը հասկանա իր դերն ու տեղը: Առաջին հերթին, բիզնեսը կարող է մասնակից լինել կոռուպցիոն գործողությունների: Ի վերջո, կոռուպցիայի դեմ պայքարում շահառու են նաև բիզնես կառույցներն ու միավորումները: Ես չեմ ուզում ասել, որ մենք շատ մեծ արդյունքներ ունենք, բայց ուզում եմ նաև չանտեսենք այն արդյունքները, որ հիմա առկա են: Նախ և առաջ սկսեց բիզնեսը ակտիվանալ, սկսեց խոսել խնդիրների մասին: Վերջերս նաև նկատել ենք, որ բիզնես միավորումները փորձում են կոռուպցիայի հետ կապված հարցերը բարձրաձայնել, քննարկել ու լուծել», - նշեց ՀՀ արդարադատության փոխնախարար Սուրեն Քրմոյանը:

«Չեմ ուզում խոսել այն մասին, թե ինչ վնասակարություն ունի կոռուպցիան մեր երկրում ու ինչ մեխանիզմներ է հարկավոր ներդնել այն նվազեցնելու համար: Ասեմ միայն, որ տնտեսության մեջ շատ կարևոր է ճիշտ համակարգերի կիրառումը, կորպորատիվ կառավարումը, փողերի «լվացումը», այսինքն՝ կոռուպցիայի հետևանքով առաջացած ֆինանսական հոսքերի դադարեցումը», - նշեց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող Նաիրա Գյուլնազարյանը:

«Մենք բոլորս անընդհատ հավաքվում ենք, խոսում ենք խնդիրների մասին: Այն շատ կարևոր դեր է խաղում, այն իրազեկվածության մակարդակն է մարդկանց բարձրացնում: Կոռուպցիան այն հիմնական խնդիրներից մեկն է, որը խոչընդոտում է տնտեսական աճը: Կոռուպցիան բիզնեսի թշնամին է. նա խժժում է այն ամենը, ինչ պետք է միտված լինի ներդրումների համար», - նշեց Հայաստանում ԵՄ պատվիրակության առևտրի հարցերով պատասխանատու Կարեն Ագարյանը:

«Մենք արդեն շատ քիչ ժամանակ ունենք, որ միայն բարձրաձայնենք, արդեն ժամանակի պահանջն է, որ առաջադրված խնդիրները լուծենք: Այդ կամքը մենք տեսնում ենք ու այդ կամքի արտահայտումն է նաև այն, որ կառավարությունը շատ կարևոր ներկայացուցչական կարգով է մասնակցում միջոցառմանը: Մեզ համար դա շատ կարևոր է. երբ որ մենք մինչ այս հրավիրել ենք կառավարության ներկայացուցիչներին, այդ՝ նրանք չեն մերժել, սակայն ուղարկել են այնպիսի անձանց, որոնք հայկական դեր չունեն ոլորտում, դեկավար օղակներում չեն և լուծումներ չեն կարող տալ: Հիմա վերաբերմունքը փոխվել է», - նշեց Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զաղոյանը:

«Կարևորում եմ այս միջոցառումը կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում՝ պետության, բիզնեսի և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ», - նշեց «Արթուրս Աղվերան Ռեզորթ» հյուրանոցային համալիրի տնօրեն Սիրանուշ Կալանթարյանը:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին գեկույցներ բիզնես ոլորտում հակակոռուպցիոն գործունեության և դրա շրջանակներում արդյունավետ համագործակցության մասին: Աշխատաժողովի երկրորդ օրը աշխատանքային խմբերի ձևաչափով անցկացվեցին թեմատիկ քննարկումներ, մասնակիցները երեք խմբի բաժանվեցին, ամփոփեցին ու քարտեզագրեցին պետական գնումների, մրքային ու հարկային և ազատ տնտեսական մրցակցության ոլորտներում առկա խնդիրները, որոնք էլ ներկայացվեցին:

Ամփոփելով աշխատաժողովը, Ս. Քրմոյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին և ֆինանսավորողներին՝ հերթական կառուցողական և կարևոր նշանակություն ունեցող միջոցառման կազմակերպման համար, հավելելով, որ հետևողականության արդյունքում փուլ առ փուլ փորձում ենք լուծում տալ խնդիրներին:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կ. Զաղոյանը, ամփոփելով աշխատաժողովի արդյունքները նշեց. «Լավ է, որ արդեն կան ոլորտի քարտեզագրված խնդիրները և կարող ենք կառուցողական լուծումներ գտնել այս ուղղությամբ»:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիրառվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կվճարվի ՔՀԿ-կառավարության կայուն երկխոսություն:

Ծրագրին իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ԶԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31.117 եվրո:

Կառավարման համակարգի թափանցիկության ու իրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռագրառձև՝ +37410 54 64 95



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս՝ +374 10 229610
Հեռագրառձև՝ +374 10 229615

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և համապատասխան քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիկինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:



Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռագրառձև՝ +37410 58 02 99

Հեռախոս՝ +37410 56 03 60
Հեռագրառձև՝ +37410 56 03 60